

„ՀԱՏՈՒԿ ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,,

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(նոր խմբագրությամբ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

„ՀԱՏՈՒԿ ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. „Հատուկ լեռնափրկարար ծառայություն,, փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ է: Այն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի „Ռազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ,, փակ բաժնետիրական (Վկայական N 017938, գրանցման համարը 264.140.01859, գրանցման ամսաթիվը 20.09.1995թ.) և „Ռազմականացված լեռնափրկարար ջոկատ,, պետական փակ բաժնետիրական ընկերությունների (Վկայական N 015959, գրանցման համարը 264.140.01657, գրանցման ամսաթիվը 20.09.1995թ.) պետական բաժնետոմսերի կառավարման լիազորություններ վերապահելու և ընկերությունները վերակազմակերպելու մասին N 1117-Ա որոշմամբ՝ „Ռազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ,, փակ բաժնետիրական և „Ռազմականացված լեռնափրկարար ջոկատ,, պետական փակ բաժնետիրական ընկերությունների միաձուլման ձևով վերակազմակերպման արդյունքում՝ փոխանցման ակտերին համաձայն:

1.2. Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր): Ընկերության պետական բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

1.3. Ընկերությունը հանդիսանում է „Ռազմականացված լեռնափրկարար զորամասերի շտաբ,, փակ բաժնետիրական և „Ռազմականացված լեռնափրկարար ջոկատ,, պետական փակ բաժնետիրական ընկերությունների իրավահաջորդ:

1.4. Ընկերությունը ենթակա է պետական գրանցման գրանցումն իրականացնող մարմնի կողմից „Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին,, և „Բաժնետիրական ընկերությունների մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

1.5. Ընկերությունը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից: Այն ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:

1.6. Ընկերությունն իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, „Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, ու „Բաժնետիրական ընկերությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

1.7. Հիմնադրի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են „Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, , „Հայաստանի փրկարար ծառայության մասին,, ու „ Բաժնետիրական ընկերությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն կանոնադրությամբ:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լեզվով՝ - „Հատուկ լեռնափրկարար ծառայություն,, փակ
բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ „ՀԼԾ,, ՓԲԸ

ռուսերեն լեզվով՝ - „Атук лернапркарар цараяотюн,, ЗАО

կրճատ՝ - „АЛЦ,, ЗАО

անգլերեն լեզվով՝ - „Hatak lernaprkarar carayutun,, CJSC

կրճատ՝ - „HLC,, CJSC

1.9. Ընկերության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, 0033, ք.Երևան, Գյուլբենկյան փողոց թիվ 29շենք, շինություն թիվ 25:

1.10. Ընկերությունը կարող է գործունեություն ծավալել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊՍԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ընկերության գործունեության առարկան և նպատակն է՝ ստորգետնյա տարածքներում փրկարարական աշխատանքների իրագործումն իր ենթակայության տարածքային մասնագիտացված ստորաբաժանումների (ջոկատների) միջոցով:

2.2. Ընկերությունը զբաղվում է գործունեության հետևյալ հիմնական տեսակով՝ արտակարգ իրավիճակներում անվտանգությանն ուղղված գործունեություն՝ իրականացնելով հետևյալ աշխատանքները.

- 1) ստորգետնյա աշխատանքներում վթարների կանխարգելում.
- 2) շնչառության համար վնասակար միջավայրերում փրկարարական և տեխնիկական աշխատանքների կատարում.
- 3) պողպատյա ճոպանների փորձարկում.
- 4) թթվածնային և այլ գազերի բարձր ճնշման փոքրածավալ ու մեծածավալ բալոնների փորձարկում.
- 5) հանքահորերի օդափոխության համակարգի ուսումնասիրում.
- 6) հանքախորշերում փոշու և գազերի թույլատրելի պարունակությունների ուսումնասիրում ու առաջարկությունների (եզրակացությունների) տրամադրում.
- 7) արտակարգ իրավիճակների կանխում, դրանց հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ բնակչության և տնտեսական օբյեկտների (տարածքների) պաշտպանություն, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարում:

2.3. Ընկերությունը կարող է զբաղվել օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներով: Օրենքով սահմանված դեպքերում գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել պետական գրանցման պահից:

3.2. Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառում է ինքնուրույն հաշվեկշռում:

3.3. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

3.4. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, բանկային և կանխիկ դրամական գործառնություններ իրականացնել Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով:

3.5. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանամաք հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գրառումներով, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ և այլ նշաններ: Ընկերության ջոկատները (ստորաբաժանումները) ունեն անկյունային դրոշմ:

3.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.7. Ընկերությունը պատասխանատու չէ Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատու չէ Ընկերության պարտավորությունների համար:

3.8. Պետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

3.9. Ընկերությունն իրավունք ունի՝

- 1) ձեռք բերել գույք, արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք ու դրանցից ստացված եկամուտը.
- 2) ինքնուրույն տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները.
- 3) ներգրավել փոխառու և դրամաշնորհային միջոցները.
- 4) Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, օգնություններ:

3.10. Ընկերությունն իր խնդիրների կատարումն ապահովելու նպատակով , ,Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

- 1) Անարգել օգտագործելու կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կապի, տրանսպորտի միջոցները և այլ գույքը (բացի՝ հատուկ նշանակության, դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցներից և այլ գույքից) հետագա համարժեք փոխհատուցմամբ.
- 2) Բնակչությանը կամավոր հիմունքներով ընդգրկել անհետաձգելի փրկարարական, վթարային, վթարավերականգնողական և այլ աշխատանքներում:
- 3) Արգելելու մուտքը արտակարգ իրավիճակի, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և այլ աշխատանքների կատարման վայր ու պահանջելու բոլոր անձանցից պահպանել անվտանգության կանոնները.
- 4) Ընկերության տրանսպորտային միջոցները սարքավորել լիազոր մարմնի կողմից սահմանված հատուկ ձայնային, լուսային ազդանշանային միջոցներով և տարբերիչ նշաններով:

3.11. Ընկերությունը պարտավոր է՝

- 1) փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական

աշխատանքները կազմակերպելիս ու իրականացնելիս պաշտպանել անձի կյանքն ու առողջությունը.

- 2) պատրաստ լինել փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարմանը:

4. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

4.1. Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, քաղաքացիները „Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով , պարտավոր են՝

- 1) Աջակցել Ընկերությանը արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ.
- 2) մասնակցել արտակարգ իրավիճակների հետևանքներից բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանն ու կատարել այդ ուղղությամբ Ընկերության ծառայողների ցուցումները.
- 3) Ընկերության արտակարգ իրավիճակի վայր մեկնող, արտակարգ իրավիճակի վայրից մշտական տեղակայման վայր վերադարձող ստորաբաժանումներին ցուցաբերել աջակցություն՝ տրամադրելով տրանսպորտի և կապի միջոցներից անվճար օգտվելու հնարավորություն հետագա համարժեք փոխհատուցման երաշխիքով:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԸ , ԾԱԽՄԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5.1.Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5.460.000(հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) դրամ, որը տեղաբաշխված է 546 հատ սովորական բաժնետոմսերում, յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10.000(տաս հազար) դրամ:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը բաշխված են և պատկանում են Հիմնադրին:

5.2. Ընկերությունը ինքնաֆինանսավորվող-տնտեսավարկային տնտեսվարող սուբյեկտ է, ինքն է ստեղծում և տնօրինում անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5.3. Ընկերության ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում են հետևյալ աշխատանքներից՝

- 1) ստորգետնյա աշխատանքներում վթարների կանխարգելումից.
- 2) շնչառության համար վնասակար միջավայրերում փրկարարական և տեխնիկական աշխատանքների կատարումից.
- 3) պողպատյա ճոպանների փորձարկումից.
- 4) թթվածնային և այլ գազերի բարձր ճնշման փոքրածավալ ու մեծածավալ բալոնների փորձարկումից.
- 5) հանքահորերի օդափոխության համակարգի ուսումնասիրումից.
- 6) հանքախորշերում փոշու և գազերի թույլատրելի պարունակությունների ուսումնասիրումից ու առաջարկությունների (եզրակացությունների) տրամադրումից.
- 7) Օրենքով չարգելված այլ տնտեսական գործունեությունից:

5.4. Ընկերության ֆինանսատնտեսական միջոցները ծախսվում են հիմնականում հետևյալ ուղղություններով՝

- 1) աշխատավարձ , դրան հավասարեցված վճարումներ.
- 2) գործուղումներ.
- 3) փրկարարական և սպասարկող միջոցների, տեխնիկայի և սարքավորումների, վառելիքաէներգետիկ ռեսուրսների, այլ անհրաժեշտ նյութերի ձեռք բերում, վերազինում.
- 4) անձնակազմի ուսուցում և վերապատրաստում.
- 5) պետական և համայնքային բյուջեների հանդեպ պարտավորությունների կատարում.
- 6) Ընկերության աշխատակիցներին ֆինանսական և նյութական օգնության տրամադրում.
- 7) Օրենքով չարգելված այլ ուղղություններով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ , ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերությունը կազմված է ապարատից և նրա ենթակայության Ավանի, Ախթալայի, Ալավերդու, Դրմբոնի, Կապանի, Մեղրու, Մեղրաձորի, Սոթքի , Քաջարանի և այլ ենթաշրջանների տարածքային ստորաբաժանումներից(լեռնափրկարար ջոկատներ, կետեր, գազավերլուծական և քիմիական լաբորատորիաներ, ճոպանների փորձարկման կայան, թթվածնային և այլ գազերի բարձր ճնշման փոքրածավալ և մեծածավալ բալոնների փորձարկման կայան):

6.2. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ Ընկերության օպերատիվ ու այլ ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

6.3. Ընկերությունը լինելով ըստ նշանակության „Հատուկ,, կիրառում է ղեկավարման „կենտրոնացված միանձնյա,, սկզբունքը, որի իրավունքը պատկանում է բացառապես Ընկերության տնօրենին:

1) „ՀԼԾ,, ՓԲ ընկերության տնօրենը համարվում է ուղղակի պետ ամբողջ անձնակազմի համար: Նա կրում է պատասխանատվություն հանքերում լեռնափրկարար ծառայության

կազմակերպման ու գործունեության համար, վթարների վերացման, անձնակազմի պատրաստակալության և աշխատանքային կարգապահության պահպանման, վթարների կանխարգելման նպատակով պրոֆիլակտիկ աշխատանքի, օպերատիվ իրավիճակում ղեկավարելու, հմուտ հրամանատարների պատրաստման, „ՀԼԾ,, ՓԲ ընկերության ֆինանսատնտեսական գործունեության իրականացման համար:

2) „ՀԼԾ,, ՓԲ ընկերության տնօրենը պարտավոր է՝

ա. Ղեկավարել աշխատակազմի և ջոկատների կողմից կատարվող աշխատանքները , հետևել ջոկատների տեխնիկական և մարտական պատրաստակալությանը:

բ. Անձամբ պարապմունքներ անցկացնել հրամանատարների և առանձին ծառայությունների պետերի հետ:

գ. Ուսումնասիրել և հաստատել անձնակազմի պատրաստակալության պլաններն ու ծրագրերը:

դ. Ելնելով գործունակությունից, ընտրել և համալրել ստորաբաժանումները հրամանատարական կազմով:

ե. Պահանջել ստորաբաժանումների հրամանատարներից և ծառայությունների պետերից ընկերության գործունեությունը կարգավորող կանոնակարգերի, կանոնադրությունների, հրահանգների պահանջների կատարում:

3) „ՀԼԾ,, ՓԲ ընկերության տնօրենի իրավունքները՝

Լինելով „Հատուկ լեռնափրկարար ծառայություն,, ՓԲ ընկերության տնօրեն՝ իրավունք ունի՝

ա. Կազմակերպել լեռնափրկարար ծառայության ստորաբաժանումներ ՀՀ ողջ տարածքում և ԼՂՀ-ում , կնքել պայմանագրեր ծառայության մասին:

բ. Որոշել և հաստատել ենթակա ստորաբաժանումների հաստիքները և աշխատավարձը:

գ. Տալ հրամաններ, ցուցումներ լեռնափրկարար ծառայության, ինչպես նաև նախարարության և կառավարության հրամանների և որոշումների կատարման վերաբերյալ:

դ. Օրենքով սահմանված կարգով ընդունել, տեղափոխել և հեռացնել ծառայությունից անձնակազմի յուրաքանչյուր անդամի:

ե. Տնօրինել ծառայությանը հատկացված բոլոր ֆինանսական միջոցներն ու հսկել նրանց տեղաշարժի օրինականությունը:

գ.Կնքել պայմանագրեր ու համաձայնագրեր լեռնափրկարար ծառայության համար անհրաժեշտ բոլոր տեսակի սարքավորումների, նյութերի և տեխնիկայի հայթայթման, կադրերի պատրաստման, կապիտալ շինարարության վերաբերյալ:

ե.Հաստատել կապիտալ շինարարության ու վերանորոգման նախահաշիվները, հսկել դրանցով նախատեսված աշխատանքների կատարումը նախահաշվով որոշված գումարների սահմաններում:

ը.Բացել ու փակել հաշիվներ բանկերում, օգտվել բոլոր տեսակի բանկային ծառայություններից:

թ.Հաստատել ենթակա ծառայությունների տեխնիկական զինվածության տարբերները: ժ.Հաստատել անպիտանելիության պատճառով դուրս գրման կամ օտարման ենթակա սարքավորումների ցանկերը՝ մինչև վերադաս կազմակերպության ներկայացնելը:

4)Տարածքային ստորաբաժանումներում (ջոկատներում)՝ ջոկատի հրամանատարը պարտավոր է՝

ա.Իմանալ սպասարկվող ձեռնարկության անցուղիներն ու նրանց վիճակը, վթարային օբյեկտ շտապ հասնելու նպատակով:

բ.Անցկացնել տեսական և գործնական պարապմունքներ ջոկատի անձնակազմի հետ, ստուգել ջոկատի ընդհանուր պատրաստականությունը, անցկացնել ուսումնական տազնապ, տակտիկական խնդիրների լուծման և այլ նպատակներով:

գ.Կազմել օպերատիվ կազմի գրաֆիկ ըստ ջոկերի և հերթափոխերի, հետևել հերթափոխերի ժամանակին փոխմանը և ամբողջ հերթապահ ու պահեստային անձնակազմի կողմից իրենց պարտականությունների կատարմանը:

դ.Անցկացնել տեսական և պրակտիկ ուսուցում՝ համաձայն կազմված ժամանակացույցի:

ե.Ղեկավարել ջոկատի գազո-անալիտիկ լաբորատորիան և հսկել նրա աշխատանքը:

զ.Կատարել պրոֆիլակտիկ հետազոտումներ սպասարկվող հանքերում ու հանքախորշերում:

է.Կոմպլեկտավորել ջոկատը սարքավորումներով, ապարատներով ու հանդերձանքով:

ը.Կատարել անհրաժեշտ հաշվառումներ և կազմել հաշվետվություններ:

5)Ջոկատի հրամանատարի իրավունքները՝

Ենթարկվելով Ընկերության տնօրենին, ջոկատի հրամանատարը համարվում է ջոկատի անձնակազմի անմիջական ղեկավարը և ունի հետևյալ իրավունքները՝

ա.Կատարել կադրերի ընտրություն և ներկայացնել տնօրենին՝ նրանց ծառայությունում ընդունելու համար:

բ.Իր հայեցողությամբ կոմպլեկտավորել ջոկերը և առաջարկել ջոկի հրամանատարի թեկնածությունը:

գ.Ջոկատի անձնակազմին տալ գրավոր ցուցումներ ու հրահանգներ:

դ.Անհանդուրժելի հանգամանքների դեպքում հեռացնել ծառայությունից ենթակային, հետագայում նրա գրավոր բացատրությունը ներկայացնելով տնօրենին:

6.4. Ընկերությունն ինքնուրույն կազմում է աշխատանքային պլաններ, հաստատում անձնակազմի հաստիքային ցուցակները, աշխատավարձերը, ինչպես նաև եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

6.5. Ընկերության աշխատակիցների հետ աշխատանքային և ծառայողական հարաբերությունները կանոնակարգվում են „ Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի փրկարար ծառայության փրկարարական ստորաբաժանումների կանոնադրերով:

6.6. Ելնելով փրկարարական աշխատանքների առանձնահատկություններից, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջները ընկերության աշխատողների վրա տարածվում են այնքանով, որքանով որ չեն հակասում „ Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքին:

6.7. Ընկերության ղեկավարման սկզբունքը վերադաս մարմնից մինչև ստորին օղակը հրամանի պարտադիր և օպերատիվ կատարումն է :

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1. Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Առաջին տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո: Ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 3 ամսվա ընթացքում:

7.2. Հիմադիր ժողովի իրավասություններն են՝

- 1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.

- 2) Ընկերության վերակազմակերպումը.
- 3) Ընկերության լուծարումը.
- 4) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
- 5) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռքբերված կամ հետգնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
- 6) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 7) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
- 8) Բաժնետոմսերի համախմբումը(կոնսոլիդացիան), բաժանումը.
- 9) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը.
- 10) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը.
- 11) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- 12) Օրենքով սահմանված այլ իրավասություններ:

7.3. Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են Հիմնադրի մեկից ավելի ներկայացուցիչներ, ապա որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Իսկ գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների երեք քառորդով:

7.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգողը և աուդիտոն իրականացնող անձը:

7.5. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը: Ընկերության տնօրենը՝

- 1) Տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից.
- 2) Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
- 3) Գործում է առանց լիազորագրի.
- 4) Տալիս է լիազորագրեր.
- 5) Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ նաև աշխատանքային, Ընկերության աշխատողների նկատմամբ իրականացնելով գործատուի լիազորություններ.
- 6) Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ.
- 7) Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության կողմից վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ.
- 8) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր աշխատանքային ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄ

8.1. Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումն իրականացնելու նպատակով բաժնետերերի տարեկան ժողովը իր որոշմամբ նշանակում է վերստուգող՝ 3 տարի ժամկետով:

Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ: Հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ և չի կարող 3 հոգուց պակաս լինել:

8.2. Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու սույն կանոնադրությանը:

Վերստուգողի գործունեության կարգը սահմանվում է Հիմնադրի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով: Վերստուգողի վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և սահմանները սահմանվում են Հիմնադրի որոշմամբ:

8.3. Ընկերության ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել արտաքին աուդիտորների (կազմակերպության կամ ֆիզիկական անձի)՝ կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագրեր:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է կառավարման բարձրագույն մարմնի(Հիմնադրի) կողմից: Նրա հետ պայմանագրեր կնքում է Ընկերության խորհրդի նախագահի կողմից, իսկ ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշվում է խորհրդի կողմից:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերով:

9.2. Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

9.3. Ընկերությունը համարվում է վերակազմակերպված կամ լուծարված՝ նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման կամ գործունեությունը դադարելու վերաբերյալ գրանցման պահից:

